# Հայաստանի Հանրապետության կազմավորումը

## Բաթումի պայմանագիրը

1918 թ. ապրիլի 15 (28)-ին օսմանյան կառավարությունը պաշտոնապես ճանաչեց Անդրկովկասի անկախությունը և համաձայնվեց Բաթումում շարունակել Տրապիզոնում ընդհատված հաշտության բանակցությունները[25]: Մինչև Բաթումի բանակցությունների սկսվելը թուրքերն արդեն գրավել էին Բրեստ-Լիտովսկի հաշտությամբ իրենց հանձնվելիք տարածքները:

Թուրքիայի պարտադրանքով իր անկախությունը հռչակած ԱԴԴՀ կառավարությունը թուրքերի մուտքը դեպի Անդրկովկասի խորքերը կանխելու նպատակով մայիսի 11-ին Բաթումում բանակցություններ սկսեց Թուրքիայի հետ: Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր արդարադատության նախարար և պետական խորհրդի նախագահ Ճ. Հալիլ բեյը, իսկ անդրկովկասյանը՝ կառավարության նախագահ և արտաքին գործերի

[25] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, док. 122, էջ 253:

նախարար Ա. Չխենկելին: Պատվիրակության կազմում էին հայ պատվիրակներ՝ խնամատարության նախարար Հ. Քաջազնունին և ֆինանսների նախարար Ա. Խատիսյանը: Կային նաև խորհրդականներ, զինվորական փորձագետներ, քարտուղարներ, ընդամենը՝ 45 մարդ: Թուրքական կողմից Բաթումում էր գտնվում Կովկասյան ճակատում թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան: Այդտեղ ժամանեց նաև ծովային նախարար Ջեմալ փաշան: Բաթումում էր նաև գերմանական պատվիրակությունը՝ լիազոր ներկայացուցիչ գեներալ Օ. ֆոն Լոսովը, պատվիրակներ կոմս Վ. ֆոն Շուլենբուրգը և ուրիշներ՝ դիտորդի կարգավիճակով: Ի դեպ, իբրև շահագրգիռ կողմ Գերմանիայի միջնորդությամբ Բաթումի բանակցություններին մասնակցելու ցանկություն հայտնեց Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, թեև վերջինս չէր ճանաչում Անդրկովկասի կառավարությանը: Մայիսի 15-ին Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Գ. Չիչերինը հայտարարություն արեց այդ մասին և հասկացնել տվեց, որ եթե ռուսական կողմը չմասնակցի բանակցություններին, ապա պայմանագիր կնքվելու դեպքում այն չի ճանաչվի Ռուսաստանի կողմից: Սակայն Գ. Չիչերինի նոտան՝ Բաթումի բանակցություններին մասնակցելու վերաբերյալ, մնաց անպատասխան[26]:

Մայիսի 11-ին Բաթումի քաղաքային ակումբի շենքում Հալիլ բեյի նախագահությամբ բացվեց խորհրդաժողովը: Այս անգամ էլ, ոգևորված ռազմական հաջողություններով, թուրքերն ամենևին մտադրություն չունեին բավարարվել Բրեստի դաշնագրի պայմաններով: Թուրքական պատվիրակության ղեկավարը մերժեց անդրկովկասյան կողմի առաջարկը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը բանակցությունների հիմքում դնելու վերաբերյալ՝ պատճառաբանելով հանգամանքների փոփոխությամբ: Առաջին իսկ նիստում Խալիլ բեյը հայտարարեց, որ Տրապիզոնի ձախողված բանակցություններից ի վեր «դժբախտաբար արյուն է հոսել», և հետևապես ինքը չի կարող հնարավոր համարել, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը դրվի ներկա բանակցությունների հիմքում:

Հալիլ բեյը միանգամից ներկայացրեց նախապես կազմված խաղաղության ու բարեկամության մասին պայմանագրի թուրքական նախագիծը՝ 12 հոդվածով և 3 հավելվածով: Թուրքերն առաջադրեցին նախորդից (Տրապիզոնից և Բրեստից) շատ ավելի կողոպտիչ պայմաններ: Մասնավորապես, բացի Կարսից, Արդահանից և Բաթումից (որոնք արդեն գրավել էին), նրանք պահանջում էին հիմնականում հայերով բնակեցված Ախալքալաքը և Ախալցխան, Երևանի նահանգի արևմտյան մասը՝ ներառյալ Արաքս գետի հովիտը, Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Թուրքական պատվիրակությունը նոր պահանջը «հիմնավորում էր» «մուսուլմանների անվտանգության ապահովման», դեպի Հյուսիսային Իրան զորք փոխադրելու և անգլիացիների դեմ կռվելու պատրվակով[27]: Դա նշանակում էր, որ հայերով բնակեցված արևելահայ մի շարք (5–6) գավառներ, ինչպես նաև Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա ռազմավարական նշանակության երկաթուղին անցնելու էին Թուրքիային: Տիրանալով հայկական այդ տարածքներին և երկաթուղուն՝ երիտթուրք կառավարողները հետապնդում էին հեռագնա նպատակներ՝ հանել իրենց պանթուրքական պլանների իրականացմանը՝ Հայաստանով անցնել Բաքու և այնտեղից էլ անդրկասպյան երկրամաս: Խորհրդաժողովին մասնակից Ս. Վրացյանը վկայում է. «Մահմեդական պատգամաւորները ցնծութեան մէջ էին. նրանց բաժին էր ընկնում ամբողջ արեւելեան Անդրկովկասը: Վրացիները շատ տխրելու պատճառ չունէին, նրանք կորցնում էին Բաթումը և Ախալցխայի շրջանը»[28]:

Բանակցությունների առաջին օրերին թուրքերը կարծես չէին շտապում: Նրանք մի

[26] Տե՛ս Документы внешней политики СССР, т. 1, Москва, 1959, էջ 303:
[27] Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997, էջ 192:
[28] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. 4, Պէյրութ, 1965, էջ 115:

գային խորհրդում զեկուցեցին Բաթումի խորհրդաժողովի և թուրքական վերջնագրի մասին:

Մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը, Հ. Քաջազնունու և Ա. Խատիսյանի մասնակցությամբ, քննարկեց ստեղծված կացությունը՝ և՛ Հայաստանի անկախության հռչակման խնդիրը, և՛ Թուրքիայի վերջնագրի պատասխանի հարցը: Բուռն քննարկումներից հետո խորհուրդը, ինչպես արդեն ասվել է, որոշեց ընդունել թուրքերի վերջնագիրը և «յանուն անկախ Հայաստանի» հաշտություն կնքել[39]: Կազմվեց նոր պատվիրակություն՝ Ա. Խատիսյան (նախագահ), Հ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան (անդամներ) կազմով, որն էլ նույն օրը երեկոյան Թիֆլիսից մեկնեց Բաթում, քանի որ հաջորդ օրը՝ մայիսի 29-ի երկրորդ կեսին, լրանում էր թուրքերի վերջնագրի եռօրյա ժամկետը: Մայիսի 29-ի առաջին կեսին Հայաստանի պատվիրակությունը հասավ Բաթում և նամակով թուրքերին տեղեկացրեց Հայաստանի անկախության և թուրքական վերջնագիրն ընդունելու մասին:

Թեև Բաթում մեկնած Հայաստանի պատվիրակությունն ընդունել էր թուրքերի վերջնագիրը, սակայն չկար որևէ երաշխիք, որ խոստումնազանց թուրքերը կրկին չեն դիմի նոր զավթումների ու կոտորածի: Ս. Վրացյանի հայտնած տվյալներով՝ մայիսվերջյան այդ ծանր օրերին թուրքերն ունեին զորքի թվական ակնհայտ գերակշռություն[40]:

Ժողովրդի անվտանգությամբ մտահոգ բոլոր քաղաքական ուժերի ու գործիչների կարծիքը դարձյալ հաշտություն կնքելն էր: Խնդիր դրվեց մի կողմից՝ վարելու պաշտպանողական կռիվներ՝ ժամանակ շահելու համար, իսկ մյուս կողմից՝ համոզելու նրան, որ շուտափույթ հաշտություն կնքվի:

Մայիսի 30-ին սկսվեցին հայ-թուրքական անջատ բանակցությունները: Հայկական կողմը թուրք պատվիրակության նախագահին իրազեկեց, որ Հայաստանը հռչակել է իր անկախությունը, և ինքը հանդես է գալիս նորանկախ հանրապետության անունից՝ հանձին կառավարության իրավասություններ ստանձնած Հայոց ազգային խորհրդի: Հայկական կողմը նպատակ ուներ պաշտպանելու Բրեստի պայմանագրի պայմանները: Ա. Խատիսյանը նշում է, որ խնդիր ունեին «ըստ կարելւոյն տանելի դաշնագիր մը կնքելու... թուրքերուն հետ»[41]: Բանակցությունների առաջին իսկ նիստում քննարկման նյութ դարձավ սահմանների խնդիրը: Թուրքական կողմը պնդեց, որ ընդունվի իրենց պայմանագրի նախագիծը, որով Հայաստանի Հանրապետությանը փաստորեն թողնվում էր մի անձուկ տարածք: Միաժամանակ թուրքերը պահանջեցին, որ հայկական ուժերը դուրս բերվեն Բաքվից:

Հայկական կողմը մի շարք փաստարկներ բերեց, որ նման փոքր տարածքի վրա անհնար է ապրել և քիչ թե շատ կենսունակ պետականություն ձևավորել: Սակայն Հալիլ բեյը և Վեհիբ փաշան մնում էին անդրդվելի: Ըստ այդ սահմանի՝ թուրքերին անցնում էր ամբողջ Կարսի մարզը, Ախալքալաքի գավառը, Ալեքսանդրապոլ քաղաքը, Սուրմալուի գավառը, Երևանի, Էջմիածնի և Նախիջևանի գավառների զգալի մասը, Համամլու-Երևան խճուղին, Ղարաքիլիսա-Ուլուխանլու (Մասիս) ամբողջ երկաթուղին և այլն:

Թուրքերը պահանջում էին նախաստորագրել պայմանագիրը և սկզբունքորեն ընդունել իրենց ներկայացրած տարածքային պահանջները՝ խոստանալով ընթացքում որոշ սրբագրման ենթարկել սահմանագիծը: Այդտեղ խոսքը միայն հայ-թուրքական սահմանագծի մասին էր: Թուրքերը խուսափում էին քննելուց հայ-վրացական և հայ-ադրբեջանական սահմանները՝ հույս հայտնելով, թե դրանք կլուծվեն երեք պետությունների փոխադարձ համաձայնությամբ: Դա նշանակում էր, որ բաց էր մնում Լոռու, Զանգեզուրի, Ղարաբաղի և այլ տարածքների ճակատագիրը:

Ի վերջո, Հայաստանի պատվիրակությունը ստիպված համաձայնություն տվեց նախագծին: Այնուհետև հաջորդ օրը՝ մայիսի 31-ին, սկսվեց կողմերի տեխնիկական հանձնաժողովի աշխատանքը, որը գլխավորում էր Վեհիբ փաշան: Ի դեպ՝ վերջինս հայերի՝ որպես լավ կռվողների վերաբերյալ չզլացավ գովասանքի խոսքեր շռայլել:

Սահմանների ճշգրտման (սրբագրման) հետ կապված՝ թուրքերն առաջ քաշեցին երկու տարբերակ: Մի դեպքում Թուրքիան Հայաստանին էր «զիջում» Արագածի լանջերից ու Ապարանի շրջանից 900 քառ. կմ, իսկ Երևանի նահանգից՝ 400 քառ. կմ հողատարածք: Երկրորդ տարբերակով առաջարկվում էր տարածքների փոխանակում. Հայաստանին տալ 2,5 հազար քառ. կմ տարածք՝ դրա դիմաց վերցնելով Բորչալուի գավառի կեսը: Վերջին տարբերակն ամենևին ընդունելի չէր, որովհետև Հայաստանը փաստորեն կտրվելու էր Վրաստանից: Ընդունվեց առաջին տարբերակը:

Այդպիսով՝ Հայաստանին լրացուցիչ անցնում էին Համամլու-Աշտարակ խճուղին և Երևանի նահանգի հարավային մասից մի հողակտոր՝ ընդամենը 1300 քառ. կմ տարածք:

Բաթումի պայմանագրի խմբագրական-բովանդակային սրբագրումներից է նաև այն, որ Հայաստանի պատվիրակության պահանջով մայիսի 11-ին թուրքերի ներկայացրած նախագծից դուրս հանվեցին՝ 1. Հայաստանի ներքին գործերին միջամտելու թուրքերի իրավունքը, 2. զինագրավված գավառներից պատերազմի ժամանակ հայերից զինվորներ հավաքագրելու թուրքերի իրավունքը, 3. Բաքուն բոլշևիկներից մաքրելու հայերի պարտականությունը, 4. Հայաստանի երկաթգծերը և շարժակազմը թուրքերի ուժերով վերանորոգելու իրավունքը և Հայաստանի ինքնիշխանությունը սահմանափակող այլ դրույթներ[42]:

Բացի այդ, թուրքական պատվիրակությունը համաձայնվում էր դիվանագիտական ճանապարհով լուծել մի շարք հարցեր, այդ թվում՝ Ջուլֆայով հայ փախստականների և հայ զինվորների ազատ տեղափոխման հնարավորությունը (իրավունքը), հայ փախստականների՝ դեպի Ալեքսանդրապոլ, Կարս, Սուրմալու և այլ վայրեր վերադարձի հնարավորությունը, պայմանագրով նախատեսված շրջաններից թուրքական և հայկական զորքերի դուրսբերումը և այլն: Սակայն թուրքերն իրենց այդ խոստումը չկատարեցին:

Բանակցությունների ավարտին՝ հունիսի 2-ին, Ա. Խատիսյանը, օգտվելով Հայոց ազգային խորհրդի կողմից իրեն ընձեռած լիազորություններից, հայկական զորակազմի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանին ուղղված հեռագրով խնդրում է, որ ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ պետք է դադարեցնել ռազմական գործողությունները, մտնել հարաբերությունների մեջ թուրքական հրամանատարության հետ և երկու կողմերի զորքերը հետ քաշել մինչև պայմանագրի նախագծով նախատեսված սահմանները: Դա նշանակում էր, որ Բաթումի հաշտության բանակցություններն ընթացել էին, փաստորեն, առանց հրադադարի:

Նույն հեռագրով Ա. Խատիսյանը Թ. Նազարբեկյանին նաև իրազեկում է, որ պատերազմի ընթացքում Թուրքիան իրավունք ունի երկաթուղով և խճուղային (Դիլիջան-Ղազախ) ճանապարհով զորք ու ռազմամթերք փոխադրելու Ադրբեջան: Հայտնվում է նաև, որ Հայաստանը կարող է ունենալ միայն մեկ դիվիզիա և այլն:

Հունիսի 2-ին բանակցությունների արդյունքի մասին Ա. Խատիսյանը նամակով,

[39] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 153:

[40] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 144:

[41] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 85:

[42] Տե՛ս նույն տեղում, էջ 134–135:

ապա հեռախոսային կապով (Քարուլեթիից) տեղեկացնում է նաև Հայոց ազգային խորհրդին ու խնդրում, որ խորհուրդը՝ որպես գերագույն գործադիր մարմին, իր հերթին հրահանգի Թ. Նազարբեկյանին ռազմական գործողությունները դադարեցնելու և առաջադրվող մյուս պայմանները կատարելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ մայիսի վերջին և հունիսի սկզբին ընթացող ռազմական գործողությունների և արտաքին աշխարհի հետ Հայաստանի կապի կտրվածության հետևանքով Բաթումում գտնվող հայ պատվիրակներն ու Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը բավարար տեղեկություններ չունեին Հայաստանի, հայկական զորքի վիճակի և ռազմական գործողությունների ընթացքի մասին և որոշ տեղեկություններ առաջինը թուրքերից էին իմանում:

Հունիսի 2-ի նամակում Ա. Խատիսյանը, ամփոփելով հայ-թուրքական բանակցությունների արդյունքները, գրում է. «Մենք կբերենք վատ հաշտության պայմանագիր, բայց կբերենք նաև անկախ Հայաստան, տուն, բուն, որտեղ կռվում է ժողովրդական միտքը: Այս բոլորը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է: Ես հավատում եմ մեր պետությանը»[43]:

Հունիսի 4-ին՝ ժամը 12-ին՝ Խալիլ բեյի և Ա. Խատիսյանի եզրափակիչ ելույթներից հետո, պատվիրակությունների բոլոր անդամների ներկայությամբ ստորագրվեց Խաղաղության և բարեկամության պայմանագիրը Օսմանյան կայսրության կառավարության և իրեն անկախ հայտարարած Հայաստանի Հանրապետության միջև: Պայմանագրի ստորագրումով օսմանյան կառավարությունը, փաստորեն, ընդունեց ու ճանաչեց Հայաստանի անկախությունը: Բացի պայմանագրից ստորագրվեց նաև նրան կից երեք փաստաթուղթ. 1) տարանցման մասին, 2) սահմանակից շրջանների միջև առևտրի մասին և 3) կրոնի ու կրոնական հաստատությունների հանդեպ փոխադարձ հարգանքի մասին, և մեկ լրացուցիչ համաձայնագիր (6 հոդվածով) հայկական զորքի զորացրման, գերիների փոխանակման ու երկաթուղու շահագործման կարգի մասին[44]:

Մասնավորապես առաջին՝ տարանցման մասին հավելվածի համաձայն՝ թուրքերն իրավունք էին ստանում պատերազմի ժամանակ Հայաստանով զորք, զենք-զինամթերք և այլ բեռներ անարգելք փոխադրելու երկաթուղային ու խճուղային ճանապարհներով, ինչպես որ արեցին 1918 թ. ամռան ընթացքում: Թուրքական զորքը գրավել էր Հայաստանի Հանրապետության գրեթե ամբողջ երկաթուղին՝ մինչև Քոլագիրան կայարանը, ինչի հետևանքով Հայաստանը զրկվել էր երկաթուղային ելք ու մուտքի հնարավորությունից:

Բուն պայմանագիրը բաղկացած էր 14 հոդվածներից, որոնցից գլխավորը, թերևս, 2-րդ հոդվածն էր, որը վերաբերում էր Թուրքիայի հետ Վրաստանի ու Հայաստանի սահմանագծին: Բաթումի պայմանագրի հայ-թուրքական սահմանին վերաբերող մասով սահմանագիծը մոտավորապես սկսվում է Ախալքալաքի գավառի արևելյան անկյունից, իջնում է հարավ՝ կտրելով Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղին՝ Աղբուլաղ կայարանից 5 կմ դեպի արևմուտք, այնուհետև՝ լեռնագագաթներով մինչև Խանվալի ավանը: Այդտեղից ուղիղ գծով իջնում է մինչև Արագածի ամենաբարձր գագաթը, որտեղից դարձյալ, ուղիղ գծով կտրելով Էջմիածին-Սարդարապատ խճուղին, իջնում է Էջմիածնից 7 կմ հարավ-արևմուտք և շրջանցում քաղաքը երկաթուղուն գրեթե զուգահեռ՝ 6 կմ բացվածքով, իսկ Բաշքյարան ավանից 16 կմ իջնում դեպի Շարուր՝ Արփա գետի հովիտ (դաշտ)[45]:

---

[43] Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը, Երևան, 1998, էջ 135–136:

[44] Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 90, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, թ. 120–121:

[45] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., վավ. 25, էջ 36–40: ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 (մաս II), թ. 332–333:



Պայմանագրի մյուս հոդվածները վերաբերում էին Հայաստանին «օգնության» հասնելու, անկանոն զորախմբերի (հրոսակախմբերի) ցրման, ազգային-կրոնական իրավունքների հարգման, հյուպատոսական իրավունքի, առևտրի կանոնների, երկաթուղային փոխադրումների, փոստ-հեռագրի, շարժական և անշարժ գույքի իրավունքի, վիզաների և այլ խնդիրներին: Բաթումի պայմանագիրը չէր շոշափում հայ-վրաց-ադրբեջանական սահմանային խնդիրները: Դրանք տվյալ հանրապետությունները պետք է որոշեին փոխադարձ համաձայնությամբ, իսկ եթե այդպես հնարավոր չլիներ, ապա՝ միջազգային իրավարարությամբ: Ինչ վերաբերում է Զանգեզուրին և Ղարաբաղին, ապա այդ տարածքները, կտրված լինելով Հայաստանի կենտրոնից, չէին կարող մտնել Հայաստանի Հանրապետության կազմի մեջ:

Բաթումի պայմանագրի հետ կապված՝ կողմերի զորքերը սահմանազատման գծից հետ քաշելու, երկաթուղու փոխանցման ու շահագործման կարգի, գաղթականության վերադարձի, ռազմագերիների փոխանակման և այլ խնդիրների շուրջ հունիսի երկրորդ կեսին Ալեքսանդրապոլում ընթացան հայ-թուրքական սահմանային խառը հանձնաժողովի բանակցությունները՝ գեներալ Տեր-Հակոբյանի, Մ. Մուսինյանի և Ք. Կարաբեքիրի միջև:

Այսպիսով՝ Բաթումի կողոպտիչ պայմանագրով Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև արևելահայ տարածքների զգալի մասը՝ Կարսը, Կաղզվանը, Արդահանը, Ախալքալաքը, Սուրմալուն, Նախիջևանը, ինչպես նաև Ալեքսանդրապոլ քաղաքը և Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի գավառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը և Շարուր-Դարալագյազի գավառի մեկ հինգերորդը: Հայաստանի Հանրապետությանը փաստացի մնում էր ընդամենը 10,3 հազար քառ. կմ տարածք, որն ընդգրկում էր Սևանա լճի ավազանը և Արարատյան դաշտի մի մասը: Լեոյի պատկերավոր արտահայտությամբ. «Տասը հազար քառակուսի վերստ էր այդ Հայաստանը, մեծ մասամբ՝ լեռ ու անապատ՝ Սևանի լճի չորս կողմը, հայ ժողովրդի ոչ թե բնակության տեղ, այլ գերեզման»[46]: Իսկ ըստ Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆի՝ «թուրքերը հայերին տեղ տվեցին Սևանում լողանալու համար, բայց դուրս գալու, չորանալու համար տեղ չտվեցին»[47]:

Բաթումի պայմանագրով Հայաստանին մնում էր ընդամենը 6 վերստ երկաթուղի, իսկ պետական սահմանն անցնում էր Երևանից 7 կմ հեռավորության վրա՝ Ուլուխանլու (Մասիս) կայարանի մոտով: Ընդհանուր հաշվով Թուրքիան Արևելյան Հայաստանից, չհաշված Ախալքալաքը և Ախալցխան, խլում էր 28 հազար, իսկ Անդրկովկասից՝ 38 հազար քառ. վերստ տարածք[48]: Բացի դրանից, Թուրքիան իրավունք էր ստանում օգտագործելու Հայաստանի երկաթուղիներն ու խճուղիները՝ իր զորքերն ու բեռները փոխադրելու համար:

Բաթումի դաշնագիրը նվաստացուցիչ էր հայ ժողովրդի ու նրա նորաստեղծ պետականության համար: «Բաթումն», իրոք, ավելի քան հայկական «Բրեստ-Լիտովսկն էր»: Մյուս կողմից՝ ճակատագրի հեգնանքով դա անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթն էր, որով Թուրքիան առաջինը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախությունը: Այդպիսով՝ Հայաստանը դառնում է անկախ (ինքնիշխան) պետություն և միջազգային իրավունքի սուբյեկտ: Ի դեպ, Հայաստանից հետո նույն օրը՝ երեկոյան, Թուրքիան հաշտության պայմանագրեր կնքեց Ադրբեջանի և Վրաստանի հետ: Հայ-թուրքական և վրաց-թուրքական պայմանագրերի հոդվածների հա-

---

[46] Լեո, Անցյալից. հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 404:

[47] Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը, էջ 142:

[48] Տե՛ս Завриев Д.С., К новейшей истории северо–восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, էջ 69:

մեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ զգալի ընդհանրություն կար երկու պայմանագրերի միջև, եթե հաշվի չառնվեն Հայաստանի հսկայական տարածքային կորուստները: Հայ–թուրքական և թուրք–վրացական պայմանագրերի միակ էական տարբերությունը, թերևս, այն էր, որ Հայ–թուրքական պայմանագրի 4–րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր զենքի ուժով օգնություն ցույց տալ Հայաստանին այն դեպքում, երբ Հայաստանի կառավարությունը նման խնդրանքով դիմի օսմանյան կառավարությանը: Մինչդեռ թուրք–վրացական պայմանագրում նման հոդված չկար: Ինչ վերաբերում է թուրք–ադրբեջանական պայմանագրին, ապա այն ավելի շատ ռազմաքաղաքական դաշինքի բնույթ ուներ:

Բաթումի պայմանագիրը միանշանակ չընդունվեց հայ գործիչների ու հասարակական–քաղաքական ուժերի կողմից: Ժողովրդական հերոս Անդրանիկը չճանաչեց Բաթումի պայմանագիրը: Նա հարկադրված էր իր արևմտահայ կամավորական ջոկատով հեռանալ Հայաստանի Հանրապետության սահմաններից դեպի Նախիջևան ու Սյունիք: ՍԴՀԿ Թիֆլիսի կենտրոնական վարչությունը պահանջեց չեղյալ համարել Բաթումի պայմանագիրը: Պայմանագրին դեմ արտահայտվեցին լայն հասարակական շրջաններ: Երևանում և այլուր տեղի էին ունենում բազմամարդ ցույցեր, ժողովներ՝ ի նշան բողոքի: Այդ կողոպտիչ պայմանագրին դեմ արտահայտվեցին նույնիսկ Երևանի Հայոց ազգային խորհրդի դաշնակցական թևը, ՀՅԴ Վրաստանի և Թիֆլիսի կոմիտեն: Վերջինիս պաշտոնաթերթ «Աշխատանքը» այդ պայմանագիրը համարեց «ամոթալի և ստորացուցիչ» հայերի համար[49]:

Սակայն որքան էլ ծանր էր այդ պայմանագիրը ստեղծված իրավիճակում, այն չուներ այլընտրանք: Պայմանագիրը Հայաստանին էր պարտադրվել ուժի միջոցով: Թույլ և անօգնական Հայաստանը ի վիճակի չէր շարունակելու պատերազմը: Դա պատերազմից դուրս գալու և հայ ժողովրդին վերջնական բնաջնջումից փրկելու միակ հնարավոր ելքն էր: Ստեղծված իրադրության սթափ վերլուծությունը դիկտատոր Արամ Մանուկյանին (Սարգիս Հովհաննիսյան), գեներալ Թ. Նազարբեկյանին, պայմանագիրը ստորագրող Ա. Խատիսյանին, Հ. Քաջազնունուն բերել էր այդ համոզման: Կառավարության գործառույթներ ստանձնած Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը հրահանգում է հայկական զորքերի գլխավոր հրամանատար Թ. Նազարբեկյանին հայկական զինուժը հետ քաշել Բաթումի պայմանագրով սահմանագծված դիրքերը: Իսկ հունիսի 9–ին Ա. Մանուկյանը Երևանում հայտարարում է, որ պայմանագիրը հնարավոր չէ մերժել:

Խնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից քննարկելու դեպքում պետք է նշել, որ պայմանագիրն իրավական ուժ չի ունեցել, քանի որ չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի կառավարությունների կողմից: Բաթումի պայմանագիրը չճանաչվեց Խորհրդային Ռուսաստանի, Անտանտի, Քառյակ միության երկրների և այլ պետությունների կողմից: Բաթումի անարդարացի պայմանագիրը վերանայելու ակնկալիքով էր, որ հունիս ամսին Բեռլին (Հ. Օհանջանյան, Ա. Զուրաբյան) և Կ. Պոլիս (Ա. Ահարոնյան, Ա. Խատիսյան, Մ. Պապաջանյան) մեկնեցին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունները: Թեև նրանք զգալի ջանքեր թափեցին, սակայն ապարդյուն: Բաթումի պայմանագիրն իր ուժը պահպանեց մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը՝ 1918 թ. նոյեմբերը:

[49] Տե՛ս Աշխատանք, 8 հունիսի, 1918:

Աղբյուրը՝ *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, h. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 18-26: